ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Վարդան Բոստանջյանի, Հովհաննես Մարգարյանի և Արամ Սաֆարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածում շարադրված օրենքի 61-րդ հոդվածի 2.1-ին կետի «բ» ենթակետը «որոշումների» բառից հետո լրացնել «պատճառաբանական և» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները շարադրվում են որոշման պատճառաբանական մասում, որը որոշման եզրափակիչ մասի հետ կազմում է մեկ միասնական ամբողջություն:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև օրենքի նախագծի 3-րդ, «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածներին:

2. 3-րդ հոդվածը խմբագրման կարիք ունի, քանի որ հոդվածով առաջարկվող օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի նոր խմբագրության երկրորդ պարբերությունը հակասում է առաջին պարբերությանը:

3. Անհրաժեշտ է 1-ին հոդվածի մասերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածին:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում, նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, անհրաժեշտ է «1-ին ենթակետը» բառերը փոխարինել «1-ին կետը» բառերով, իսկ «օրենքը կամ իրավական ակտը սահմանադրական է ճանաչել» բա-

ները՝ «օրենքը կամ իրավական ակտը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել» բառերով:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «օրենքը սահմանադրական է ճանաչել» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել» բառերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի նիստում հավանության արժանացավ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՍԴՈ-751 և ՍԴՈ-943 որոշումների կենսագործմանը, և որով կվերացվի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետ նշված օրենքների ունեցած անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերը սոցիալական պաշտպանության ոլորտում ունեն չեզոք ազդեցություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, << Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, << Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքների (այսուհետ՝ օրենքներ) նախագծերի ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում են:

Եզրակացություն

««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», « ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», « ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***, քանի որ *Նախագիծը նախատեսում է, որ ցանկացած օրենքի կամ իրավական ակտի դրույթների և վերջիններիս կիրառման սահմանադրաիրավական իմաստին համապատասխանության մասին որոշումը կայացնում է ՀՀ սահմանադրական դատարանը, այլ ոչ թե տվյալ օրենքը կիրառող մարմինը: Միաժամանակ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումը նոր հանգամանք է համարվում ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից գործը վերանայելու համար:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Նախագիծ
Պ-1224-31.08.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1 հունիսի 2006թ., ՀՕ-58-Ն, այսուհետ՝ Օրենք(՝

ա(61-րդ հոդվածը լրացնել 2.1-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Սահմանադրական դատարանի ակտերը՝ որոշումները եւ եզրակացությունները պետք է բավարարեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին.»,

բ(նույն հոդվածի 5-րդ մասը «որոշումները» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ այդ որոշումների եզրափակիչ մասերում իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ իրավական որոշակիությամբ արտահայտված դիրքորոշումները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1(սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.»:

Հոդված 3. Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12. Սույն հոդվածում նշված գործերով դիմողի կամ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերում նախատեսված հիմքերով սահմանադրական դատարան դիմելու իրավունքից զրկված անձի նկատմամբ կիրառված վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը որոշման եզրափակիչ մասում վիճարկվող դրույթը, Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելով հանդերձ, միաժամանակ գտել է, որ այդ դրույթը պրակտիկայում կիրառվել է դրա սահմանադրաիրավական իմաստին ոչ համապատասխան, որը հանգեցրել է մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների խախտման, օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

Սույն հոդվածում նշված գործերով օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1224[1]-31.08.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք(204.33-րդ հոդվածի 1-ին ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1(Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը, ինչպես նաեւ սահմանադրական դատարանն իր որոշման եզրափակիչ մասում իրավական որոշակիությամբ արտահայտված դիրքորոշման մեջ օրենքը կամ իրավական ակտը սահմանադրական է ճանաչել, բայց միաժամանակ գտել է, որ այդ օրենքը կամ իրավական ակտը պրակտիկայում կիրառվել է դրա սահմանադրաիրավական իմաստին ոչ համապատասխան, որը հանգեցրել է մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների խախտման.»:

Հոդված 2. Օրենսգրքի 204.36-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1224[2]-31.08.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք(31-րդ հոդվածի՝

ա(2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Քրեական գործով վարույթը կասեցվում է, եթե դատարանը կամ գլխավոր դատախազը կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմում են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան:»,

բ(6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի երկրորդ մասում նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է, երբ սահմանադրական դատարանը դիմումի վերաբերյալ որոշում է կայացնում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1(Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել ամբողջությամբ կամ մի մասով, ինչպես նաեւ որոշման եզրափակիչ մասում իրավական որոշակիությամբ արտահայտված իրավական դիրքորոշման մեջ օրենքը սահմանադրական է ճանաչել, բայց միաժամանակ գտել է, որ այդ օրենքը պրակտիկայում կիրառվել է դրա սահմանադրաիրավական իմաստին ոչ համապատասխան, որը հանգեցրել է մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների խախտման.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանն իր 25 փետրվարի 2011թ. ՍԴՈ-943 որոշման եզրափակիչ մասում ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19 եւ 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր է ճանաչել ՀՀ քր. դատ. օր. 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ այդ օրենքի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավացիորեն գտնում է, որ ցանկացած օրենքի սահմանադրաիրավական իմաստը որոշում է ինքը եւ ոչ թե այդ օրենքը կիրառող մարմինը, որը երբեմն այն մեկնաբանում է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը ոչ համապատասխան: Ըստ որում՝ ՀՀ սահմանադրական դատարանը վերը նշված նորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2011թ. նոյեմբերի 1-ը: Ճիշտ նույն բովանդակությամբ որոշում սահմանադրական դատարանը կայացրել է նաեւ ՀՀ քաղ. դատ. օր. 204.33-րդ հոդվածի 1-ին ենթակետի վերաբերյալ, որի ուժը կորցնելու ժամկետ նույնպես սահմանվել է 2011թ. նոյեմբերի 1-ը:

Դատարանի հիշյալ որոշումը հավասարապես վերաբերում է նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ կետին եւ ՀՀ քաղ. դատ. օր. 204.33-րդ հոդվածի 1-ին կետին, որոնք Քր. դատ. օր. 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նման գործող խմբագրությամբ հաշվի չեն առնում, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան յուրաքանչյուր ոք կարող է իր իրավունքների պաշտպանությամբ սահմանադրական դատարան դիմել, երբ վիճարկում է «... իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: Իսկ օրենքի դրույթի սահմանադրականությունը, ինչպես պահանջվում է Վենետիկի հանձնաժողովի 2011թ. հունվարի 17-18-ի 85-րդ լիագումար նիստում հաստատված անհատական դիմումների հիման վրա սահմանադրական արդարադատության իրականացման եվրոպական փորձն

ամփոփող զեկույցում, յուրաքանչյուր դեպքում որոշակի մեկնաբանության միջոցով որոշում է սահմանադրական դատարանը, որը պարտավորեցնում է պետական բոլոր մյուս մարմիններին օրենքը կիրառել միայն սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված մեկնաբանությամբ: ՈՒրեմն՝ այս հարցում հստակություն մտցնելու համար անհրաժեշտ է օրենսդրականորեն եւ համալիր ձեւով՝ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում, ՀՀ քաղ. դատ. եւ ՀՀ քր. դատ. օրենսգրքերում սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները եւս նոր հանգամանք համարել ՀՀ ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների կողմից գործը վերանայելու համար,- եզրակացնում է սահմանադրական դատարանը:

ՀՀ դատական մարմինների, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչներն այս հարցին նվիրված սեմինարում, որին մասնակցել են նաեւ կից ներկայացվող օրինագծերի հեղինակները, ինչպես նաեւ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները, սկզբունքորեն ընդունում են հարցադրման իրավաչափությունը, քանի որ իրավակիրառական պրակտիկայում օրենքներին կամ այլ իրավական ակտերին դրանց սահմանադրաիրավական իմաստին ոչ համապատասխան տրված մեկնաբանությունները երբեմն կարող են նաեւ խոչընդոտել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների իրացմանը, իսկ սահմանադրական դատարանի դիրքորոշումներն այդ դեպքերում կարող են նաեւ նոր հանգամանք հանդիսանալ շահագրգռված անձանց համար այդ հիմքով դիմելու դատարան:

Նախագծերի փաթեթում մատնանաշվել է, որ օրենքների մեկնաբանման վերաբերյալ սահմանադրական դատարանի դիրքորոշումները պետք է բավարարեն իրավական որոշակիության միջազգային սկզբունքին[1] եւ հստակորեն արտահայտվեն սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասերում՝ ամփոփելով (համադրելով, սինթեզելով(ամբողջ նախորդ շարադրված պատճառաբանությունները, որպեսզի հետագայում նորից չդառնան վիճարկելի:

Նախագծերի հեղինակները, միջազգային փորձի հիման վրա նշված հարցերը լուծելուց բացի, փոփոխություն են կատարել նաեւ ՀՀ քր. դատ. օր. 31-րդ հոդվածում, որը պայմանավորված է այդ հոդվածը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նկատառումներով: Այն է՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցով: Մինչդեռ ՀՀ քր. դար. օր. 31-րդ հոդվածում նախ՝ սահմանված չէ գլխավոր դատախազի կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, երկրորդ՝ դատարանների կողմից սահմանադրական դատարան դիմելու համար սահմանված է դատարանների նախագահների խորհրդին դիմելու ընթացակարգ, որպեսզի վերջինս «Դատարանակազմության մասին» օրենքով սահմանված կարգով լուծի օրենքի սահմանադրականության հարցը: Այսինքն՝ սահմանված է մի ընթացակարգ, որն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածին, ըստ որի՝ դատարանը կարող է անմիջապես դիմել սահմանադրական դատարան, մանավանդ որ «Դատարանակազմության մասին» օրենքն իր ուժը կորցրել է դեռեւս ՀՀ դատական օրենսգրքի ընդունման ժամանակ